# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք, ՀՀ
Արարատի մարզ,գյուղ Դիմիտրով Ս. Մաշտոցի 5/1, Հեռ.
(094)730000. , dimitrov-gyuxapetaran@mail.ru,

## ՈՐՈՇՈՒՄ

26 օգոստոսի 2016 թվականի № 21

### ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի ԹԻՎ 9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է`

Հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի օգոստոսի 26-ի , թիվ 9 հերթական նիստի հետեյալ օրակարգը.

<u>Հողամաս օտարելու մասին:</u>

Կողմ -6 դեմ- 0 ձեռնպահ-0

1. Բարսեղյան Հրանտ կողմ
2. Եղիազարյան Հենրիկ կողմ
3. Ղազարյան Սուսաննա կողմ
4. Միրզոյան Գրիգոր կողմ
5. Մխիթարյան Երանուհի կողմ
6. Մնացականյան Հասմիկ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՎԱՆՈՎ

*04200683*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք, ՀՀ
Արարատի մարզ,գյուղ Դիմիտրով Մ. Մաշտոցի 5/1, Հեռ.
(094)730000, , dimitrov-gyuxapetaran@mail.ru,

# ՈՐՈՇՈՒՄ

26 օգոստոսի 2016 թվականի № 22

## ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավար Արման Իոնանովը՝ ուսումնասիրելով Ալբերտ Ռազմիկի Գնորգյանի կողմից լիազորված անձ Յուրիկ Ալեքսանի Կյուրեղյանի դիմումը և ներկայացված փաստաթղթերը , ներկայացրեց առաջարկություն ուղղակի վաճառքի միջոցով տնամերձ հողամաս օտարելու մասին՝ տալով հետևյալ պարզաբանումը

Պարզաբանում.

Ալբերտ Գնորգյանը՝ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի, տրված Արտաշատի պետական նոտարական գրասենյակի կողմից 07.01.1989 թ., № 83, Արարատի մարզի, Դիմիտրով համայնքի Արտաշատյան խճուղի , տուն 10 հասցեում գտնվող տանը և տնամերձ հողամասին / ծածկագիր 03-038-0006-0006/ առաջին պետական գրանցում տալու նպատակով ներկայացրել է նշված հողամասի հատակագիծը և ժառանգության իրավունքի վկայագրի պատճեն: Պարզվել է , որ նախկին սեփականատիրոջ անունով գրանցված է եղել 0.07 հա հողամաս: Չափագրման արդյունքում հայտնաբերվել է, որ ժառանգորդի կողմից օգտագործվում է 0.13926 հա հողամաս: Համայնքի ղեկավարը առաջարկեց 20-ից ավել օգտագործվող հողամասը՝ 0.05526 հա, որը դասվում է բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերի դասին, ուղղակի վաճառել օգտագործողին, քանի որ ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հող օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել՝ համայնքի ղեկավար Արման Իոնանովին, ուղղակի վաճառքի միջոցով՝ Ալբերտ Ռազմիկի Գնորգյանին, օտարել Արարատի մարզի, Դիմիտրով համայնքի, Արտաշատյան խճուղի, տուն 10 հասցեում գտնվող տան 0.07 հա տնամերձ հողամասի /ծածկագիր 03-038-0006-0006 / 20 տոկոսից ավել օգտագործվող 0.05526 հա՝ բնակավայրերի, բնակելի կառուցապատման հողամասերի դասին պատկանող, հողամասը:

2. Հաստատել վաճառքի գինը ՝ 134282/ մեկ հարյուր երեսունչորս հազար երկու հարյուր ութսուներկու / դրամ:

Կողմ -6 դեմ- 0 ձեռնպահ-0

1. Բարսեղյան Հրանտ Կողմ

2. Եղիազարյան Հենրիկ Կողմ

3. Ղազարյան Սուսաննա Կողմ

4. Միրզոյան Գրիգոր Կողմ

5. Մխիթարյան Երանուհի Կողմ

6. Մնացականյան Հասմիկ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ